



Հոչակել, որ Սուրբ Ծնունդ է, նշանակում է հաստատել, որ մարմնացած ու մարդացած Խօսքի միջոցով Աստուած ասել ու արտասանել է իր վերջին, այսինքն՝ վճռական խօսքը, ամենախորհմաստն ու ամենագեղեցիկը. այն ներմուծել է աշխարհ եւ այլեւս ետ չի վերցնելու, քանի որ խօսքը վերաբերում է Աստծոյ վճռական ներգործութեանը, քանի որ խօսքը վերաբերում է Ինքնին Աստծուն, որ ներկայ է աշխարհում: Եւ ահա այն՝ ինչ ասում է այդ Խօսքը. «Աշխարհ, ես քեզ սիրում եմ: Մարդ, ես քեզ սիրում եմ»: Մարմնացած սիրոյ այս խօսքը զալիս է մեզ ասելու, որ յաւիտենական Աստծոյ եւ մեր միջեւ պէտք է հաստատուի մի անձնական հաղորդութիւն, որի սերտ մտերմութիւնը կայանում է դէմ առ դէմ եւ սիրտ առ սիրտ լինելու մէջ. մի անձնական հաղորդութիւն, որի գոյութիւնն արդէն իսկ փաստ է, իրականութիւն, այնպէս՝ որ միակ բանը, որ մենք կարող ենք անել նրա դէմ, դա մերժելն է սիրոյ այն համբոյրը, որն արդէն իսկ այրում է մեր շուրթերը: ... Քանի դեռ տեսում է այն պահը, – միաժամանակ կարճ եւ երկար, – որ պատմութիւնն է Յիսուս Քրիստոսից յետոյ, մարդը կանչուած է իր հերթին խօսք ասելու աշխարհում. սիրոյ դողն ունենալով իր սրտում հանդէպ այն Աստծոյ, որն իր կողքին կանգնած է որպէս իր նման մարդ, մարդը պէտք է ասի. «Ես ...»: Բայց եւ ո՛չ իսկ հարկաւոր է, որ իր լեզուն շարժի կամ

Մաշտոց Կահէ Ղապարեան

բացի իր բերանը. բաւական է լռելեայն յանձնուել աստուածային սիրոյն, որը մեր հետ է, մեր հետ է այն օրից, երբ Աստծոյ Որդին իր աչքերը բացեց այս աշխարհի լոյսին:

Քառու Ռահնէր

Մարիամը եւ Եկեղեցին. երկուսն էլ Մայր, երկուսն էլ Կոյս, երկուսն էլ յղանում են Սուրբ Հոգու ներգործութեամբ, առանց ցանկասիրութեան, երկուսն էլ որդիներ են ծնում Հօրը առանց մեղքի: Մարիամն առանց որեւէ մեղքի ծնեց Գլուխը մարմնի համար, Եկեղեցին բոլոր մեղքերի թողութեամբ ծնեց մարմինը Գլխի համար: Երկուսն էլ Քրիստոսի Մայրերն են, բայց երկուսից ոչ մէկն առանց միւսի չի ծնում ամբողջութիւնը: ... Հաւատարիմ քրիստոնեայի անհատ հոգին եւս կարող է նկատուել որպէս Աստծոյ Խօսքի Հարսը, Քրիստոսի մայրը, դուստրը եւ քոյրը, միաժամանակ կոյս եւ որդեծնութեամբ արգասաւոր: Հետեւաբար, այդ որակաւորումները տրւում են ընդհանուր առմամբ Եկեղեցուն, յատուկ իմաստով՝ Մարիամին, ի մասնաւորի՝ նաեւ անհատ հաւատացեալի հոգուն, եւ տրւում են Աստծոյ իմաստութեան կողմից, որը Հօր Խօսքն է. «Այս բոլորի մէջ փնտռեցի հանգստի մի վայր եւ Տիրոջ ժառանգութեան մէջ հաստատուեցի» (Հմմտ. Իմա 24, 12): Տիրոջ ժառանգութիւնը ընդհանրական իմաստով Եկեղեցին է, յատուկ իմաստով՝ Մարիամը, մասնաւոր իմաստով՝ իւրաքանչիւր հաւատացեալի հոգին: Մարիամի արգանդի տապանակում Քրիստոս բնակուեց ինն ամիս, Եկեղեցու հաւատքի տապանակում բնակուելու է մինչեւ աշխարհի վախճանը, իսկ հաւատացեալ հոգու ճանաչողութեան եւ սիրոյ մէջ՝ յաւիտեանս յաւիտենից:

Երանելի Ռահակ Սթէլա

Աւելի սառը ոչինչ չկայ, քան այն քրիստոնեան, որ հոգ չի տանում ուրիշների փրկութեան մասին: Ամէն ոք կարող է օգտակար լինել իր մերձաւորին, եթէ կամենում է կատարել իր բաժինը: ... Մի՛ անպատուիր Աստծուն: Եթէ ասում ես, թէ արեւը չի կարող փայլել, անարդար ես նրա նկատմամբ. իսկ եթէ ասում ես, թէ քրիստոնեան չի կարող բարիք գործել, անպատուում ես Աստծուն եւ նրան ստախօս ես համարում: Արդարեւ, ավելի հեշտ է, որ արեւը չձերմացնի ու չփայլի, քան թէ իրական քրիստոնեան չչողարձակի. ավելի հեշտ է, որ լոյսը խաւար լինի, քան թէ դա տեղի ունենայ ... : Քրիստոնեայի լոյսը չի կարող ծածուկ մնալ, չի կարող թաքնուած մնալ այսքան՝ լուսափայլ ջահը:

Սուրբ Յովհան Ոսկեբերան

Մի՛ բողոքիր այն դարաշրջանից, որում ապրում ես: Եթէ այն վատն ես համարում, ինքդ քեզ հարցրու, թէ անձամբ դու ի՞նչ ես անում այն բարելաւելու համար:

Թոմաս Քառւայլ

Շատ յաճախ մենք Աստծուն փնտռում ենք այնտեղ, ուր Նա չի գտնուում, եւ նրանից այնպիսի նշաններ ենք ակնկալում, որոնք Նա երբեք մտադիր չէ տալու: Ով փնտռում է մի պատերազմող Աստուած, մի Աստուած, որ յաղթանակում է գոռոզութեամբ, յուսախաբ է մնալու, որովհետեւ Աստուած այդպիսին չէ: Աստուած յաղթանակում է միմիայն սիրոյ զօրութեամբ, սէր՝ որ տալիս է կեանքը:

Կեանքում երջանիկ լինելու միայն մէկ ձեւ կայ. ապրել ուրիշների համար:

Լէւ Տոլստոյ

Եթէ դու սիրուց չես այրուում, շատերը կը մեռնեն ցրտից:

Ֆրանսուայ Մոռիսթ

Բազմաթիւ են անձինք, որ ընդունակ են քարոզներ խօսելու մեղքի մասին: Բայց չափազանց սակաւաթիւ են նրանք, ովքեր ընդունակ են ներշնչելու զգացումը, որ բարութիւնը գեղեցիկ է, որ բարեացակամութիւնը գեղեցիկ է, որ նուիրուելը գեղեցիկ է:

Պրիճոյ Մացուլարի

Մի օր, բաւական ժամանակ առաջ, ամերիկեան մայրցամաքի բնիկ ցեղերից մէկում, տարէց մի պապիկ իր թոռնիկին պատմում էր կեանքի իմաստուն ուսուցումներից մէկը.

– Իւրաքանչիւր մարդու ներսում մի կռիւ է ընթանում, որ շատ նման է երկու գայլերի մենամարտին: Այդ գայլերից մէկը այլաբանական պատկերն է չարի. նախանձը, գայրոյթը, յոռետեսութիւնը, եսամոլութիւնը, սնապարծ յաւակնոտութիւնը, կեղծիքը եւ նման ուրիշներ: Իսկ երկրորդ գայլը այլաբանական պատկերն է բարու. խաղաղութիւնը, սէրը, յոյսը, բարեացակամութիւնը, ճշմարտութեան փափաքը, հաւատարմութիւնը եւ նման ուրիշներ:

Փոքրիկի վառ երեւակայութեան մէջ գոյնզգոյն պատկերում էր գայլերի այդ թունդ կռիւը, բայց յանկարծ դէմքը մտածկոտ արտայայտութիւն ստացաւ եւ իսկոյն հարցրեց.

– Իսկ գայլերից ո՞ր մէկն է վերջում յաղթում:

Իմաստուն ծերունու դէմքին հազիւ նկատելի ժպիտ գծուեց եւ հանդարտ ձայնով պատասխանեց.

– Միշտ էլ յաղթում է այն գայլը, որին դու կերակրում ես:



ՈՒՐԱՆ ԱՄԱՆՈՐ ՁԵՁ, ԵՐՁԱՆԿ ՆՈՐ ՏԱՌԻ

ԲԵՐԿՈՒՆՔՈՎ ԼԻ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱՏԱՅԱՅՅՆՈՒԹԻՒՆ

